ԿԱՐԾԻՔ

(պաշտոնական ընդդիմախոսի)

ԻԳ.00.04 - «Միջազգային հարաբերություններ (քաղաքական գիտություններ, պատմական գիտություններ)» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար Հովհաննես Խաչատուրի Բարդակչյանի «Ընտրախավերի էվոլյուցիայի ազդեցությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին քաղաքականության վրա (2003-2020)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Հրապարակային պաշտպանության ներկայացված «Ընտրախավերի էվոլյուցիայի ազդեցությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին քաղաքականության վրա (2003-2020)» թեմայով ատենախոսությունն արդիական ու ավարտուն գիտահետազոտական աշխատանք է, որի գիտաքաղաքական արժեքն ու պատմաքաղաքական նշանակությունը կասկած չի հարուցում:

Ատենախոսության հեղինակին հաջողվել է փաստել, որ նշյալ ոլորտում գիտահետազոտական ուսումնասիրություններն առավել արդիական են և պետք է արժանանան պատշաճ ուշադրության: Այս տեսանկյունից ատենախոսությունն արժեքավոր է, քանի որ անդրադառնում է ՉԺՀ արտաքին քաղաքականությանը, հիմնվելով Չինաստանի բազմազգ ժողովրդի ուրույն պատմական փորձի և ավանդական աշխարհընկալման վրա:

Գիտագործնական նշանակության տեսանկյունից, ատենախոսությունում ներկայացված են մի շարք տվյալներ, որոնք թույլ են տալիս կատարել ՉԺՀ արտաքին քաղաքականության հետ կապված երկարաժամկետ գործընթացների կանխատեսումներ:

Ատենախոսության մեջ համակարգված կերպով հեղինակն անդրադառնում է Չինաստանի քաղաքական մտքին, ավանդույթներին և նրանց հիմնական առանձնահատկություններին: Ուսումնասիրվել են ՉԿԿ ներկուսակցական քաղաքական խմբավորումները, նրանց ստեղծման պատմությունը, ինչպես նաև նրանց դերը ժամանակակից արտաքին և ներքին քաղաքականության մեջ: Բացի այդ, հետազոտվել է ՉԺՀ գործող քաղաքական համակարգը, մասնավորապես Չինաստանի Կոմունիստական Կուսակցության դերը ներքին և արտաքին քաղաքականության մշակման և իրագործման ոլորտում:

Հիմնվելով ատենախոսությունում բերված փաստերի վերլուծության վրա, հեղինակը եկել է այն եզրահանգման, որ ներկայումս Չինաստանի քաղաքական վերնախավի վարած արտաքին քաղաքականության նպատակն է վերականգնել մինչև 19-րդ դարը գործող

չինակենտրոն աշխարհակարգը: Դա պայմանավորված է չին ժողովրդի և չինական ընտրախավերի մեջ հետկայսերական աշխարհայացքի ձևավորման հետ, որի բնորոշ հատկանիշներից է պատմական արդարության վերականգնման պահանջը:

Ուսումնասիրության արդյունքները կարող են օգտագործվել ՉԺՀ էլիտաների գործողությունների հետագա ուսումնասիրության և կանխատեսման համար, ինչը հրատապ անհրաժեշտություն է, հաշվի առնելով աշխարհում Չինաստանի քաղաքական, ռազմական և տնտեսական դերի զգալի աճը: Այդ իսկ պատճառով, ատենախոսությունում ներկայացված տվյալները և փաստերը կարող են օգտակար լինել Հայաստանի Հանրապետության ՉԺՀ նկատմամբ արտաքին քաղաքականության ձևավորման գործում:

Ատենախոսության մեջ ներկայացված ՉԺՀ մի շարք առաջատար քաղաքական գործիչների կենսագրությունները, ինչպես նաև, ատենախոսության մեջ նկարագրված Չինաստանի ներքաղաքական ներկայիս իրավիճակը, կարող են օգտակար լինել ոչ միայն երկարաժամկետ գործընթացների կանխատեսման, այլև բանակցությունների ընթացքում ՉԺՀ քաղաքական գործիչների նկատմամբ դիվանագետների վարքագծի կառուցման տեսանկյունից:

Պետք է նշել, որ լիովին բացահայտվել են ինքնուրույն գիտահետազոտական աշխատանք կատարելու ատենախոսի ընդունակությունն ու հմտությունները հատկապես տեսական և մեթոդաբանական սկզբունքների համադրության ճանապարհով քննարկվող հիմնահարցերի սահմանների ճշգրտման և դրա հիման վրա հետազոտական նպատակների ու խնդիրների հստակ սահմանման տեսքով:

Ատենախոսության **առաջին գլխում**՝ «Մերիտոկրատիայի չինական մոդելը որպես իշխող վերնախավի ձևավորման և Չինաստանի արտաքին քաղաքականության հիմք», կատարվել է ընտրանիների հետազոտությամբ զբաղվող մի շարք հետազոտողների առաջարկած հիմնական դրույթների համառոտ ակնարկ՝ ներառելով Պլատոնին, իտալական Քաղաքական սոցիոլոգիայի դպրոցի ներկայացուցիչներին և այլոց: Բացի այդ, ուսումնասիրության առարկայի առանձնահատկությունների հետ կապված, համառոտ ակնարկ է կատարվել մի շարք ձախ քաղաքական ուղվածությանը պատկանող հետազոտողների առաջարկած հիմնական դրույթներին, ինչպիսիք են Միլոսլավ Ջիլասը, Չարլզ Ռայթը և Անտոնիո Գրամշին:

Գլխում ուսումնասիրվել են մի շարք պատմամշակութային առանձնահատկություններ, որոնք ազդել և ազդում են ՉԺՀ իշխող էլիտաների ձևավորման վրա: Խոսքը ինչպես Հան ժողովրդի ազգային-մշակութային առանձնահատկությունների, այնպես էլ Չինաստանում բնակվող բազմաթիվ այլ ազգությունների մասին է, որոնք, չնայած բնիկ

չինացիներից իրենց տարբերությանը, դարեր շարունակ ինտեգրված են եղել Չինական կայսրության և ՉԺՀ պետական կառավարման համակարգում: Բացի այդ, գլխում նկարագրված է Չինական կայսրության միջազգային փոխգործակցության չինակենտրոն բազմաստիճան համակարգը:

Ուշագրավ է նաև հեղինակի կողմից մի շարք առաջատար չինացի միջազգայնագետների տեսական աշխատությունների համառոտ ակնարկը, որի հիման վրա նա գալիս է եզրակացության՝ վերջին տասնամյակի ընթացքում միջազգային հարաբերությունների չինական ազգային տեսության ձևավորման միտման մասին, որը հիմնված կլինի ավանդական չինական գաղափարների և հայեցակարգերի վրա:

Ատենախոսության **երկրորդ գլխում՝** «Չինաստանի քաղաքական ընտրանիների էվոլյուցիան. նրանց ձևավորումը, գաղափարախոսությունը, կառուցվածքը և ազդեցությունը արտաքին քաղաքականության վրա», հեղինակը կատարել է ՉԺՀ վերնախավերի ուսումնասիրություն, որը ներառում է նրանց ձևավորման պատմությունը, ժամանակակից ՉԺՀ-ում իշխանության պաշտոնական և ոչ պաշտոնական մարմինների առանձնահատկությունները, ՉԿԿ-ի ներկուսակցական խմբավորումների միջև պայքարի ամենակարևոր դրվագները և Չինաստանում տիրող իրավիճակի վրա միջազգային այլ դերակատարների ազդեցությունը:

Կատարվել է խորը հետազոտական աշխատանք Չինաստանում ռազմաքաղաքական որոշումների կայացման պաշտոնական և ոչ պաշտոնական մեխանիզմերի, ինչպես նաև դրանց գաղափարախոսական հիմնավորումների վերաբերյալ: Հատուկ ուշադրության է արժանի Չինաստանի պետական համակարգի համար եզակի, այսպես կոչված, Փոքր առաջատար խմբերի (ՓԱԽ) գործունեության մեխանիզմը: Հետազոտելով չինական ՓԱԽ-երը և նրանց բաշխումը ՉԿԿ-ի և ՉԺՀ Պետական խորհրդի (կառավարության) միջև, հեղինակը գալիս է այն եզրահանգման, որ արտաքին քաղաքականության և ռազմական ոլորտին վերաբերվող որոշումները շարունակում են մնալ ՉԿԿ-ի կենտկոմի իրավասության ներքո, իսկ սոցիալ-տնտեսական ոլորտը կառավարվում է նաև Պետական խորհրդի կողմից:

Երրորդ գլխում՝ «Չինաստանի արտաքին քաղաքականության էվոլյուցիան. մաոիզմից մինչև կոնֆուցիականություն», հեղինակը ուսումնասիրել է ՉԺՀ 5 ղեկավարների՝ Մաո Ցզեդունի, Դեն Սյաոպինի, Ցզյան Ցզեմինի, Հու Ցզինտաոի և Սի Ցզինպինի կողմից իրականացվող Չինաստանի արտաքին քաղաքականությունը: Գլխում տրված տվյալների հիման վրա առաջ է քաշվում ենթադրություն, որ ՉԿԿ-ում գոյություն ունի արտաքին քաղաքականության հարցերի շուրջ ներկուսակցական փոխհամաձայնություն՝ ՉԿԿ գործիչների և նրանց խմբակցությունների միջև տարաձայնությունները չպետք է ազդեն ՉԺՀ միջազգային քաղաքականության վրա, դարձնելով այն ներկուսակցական

տարածայնություններից ազատ ոլորտ: Դա իր հերթին թույլ է տալիս Չինաստանի կառավարությանը մշակել և իրագործել երկարաժամկետ միջազգային քաղաքականություն:

Գնահատանքի է արժանի նաև այն հանգամանքը, որ համակարգված կերպով հեղինակը վերլուծության է ենթարկում Չինաստանի քաղաքական վերնախավերի «աջ» շրջադարձի երևույթը և մի շարք կոնֆուցիական գաղափարների վերադարձը պաշտոնական հռետորաբանություն և գաղափարախոսական գրականություն: Հեղինակը եզրահանգման է գալիս այն մասին, որ հիմնվելով Չինաստանի համար ավանդական չինակենտրոն համակարգի գաղափարի վրա, ներկայիս ազգային ընտրանիները կատարում են այդպիսի համակարգի վերստեղծման աշխատանք, հիմնվելով Եվրասիայի և Աֆրիկայի երկրների հետ տնտեսական համագործակցության և խոշոր ներդրումային ծրագրերի վրա, որոնցից ամենահայտնին՝ «Մեկ գոտի, մեկ ճանապարհ» նախաձեռնությունն է:

Գործնական նշանակության տեսանկյունից առավել արժեքավոր է ատենախոսության այն ենթագլուխը, որն անդրադառնում է ՉԿԿ ներկուսակցական պաշտոնական և ոչ պաշտոնական մարմինների գործունեության վերլուծությանը, ինչը թույլ է տալիս ավելի հստակ հասկանալ Չինաստանի ընտրախավերի կողմից որոշումների կայացման համակարգը, այդ թվում նաև, միջազգային քաղաքականության ոլորտում:

Ատենախոսության գիտական արդյունքներն ու նորույթն արտացոլված են համապատասխան եզրակացություններում, որոնք բխում են առաջադրված հետազոտական խնդիրների պարզաբանումից:

Ատենախոսության մեջ ձևակերպված հետևությունները, ընդհանրացումներն ու եզրակացությունները, ինչպես նաև ներկայացված գործնական առաջարկությունները փաստարկված են, աչքի են ընկնում տրամաբանական հետևողականությամբ և տեսական հիմնավորվածությամբ: Դրանք արդիական են և կարող են հանդես գալ որպես համակարգված և համակողմանի հիմնավորված քաղաքագիտական մոտեցում:

Դրանցից կարևորում ենք հետևյալները.

- Կոնֆուցիականությունը հանդիսանում է Չինաստանի պետական համակարգի համար հիմնորոշ գաղափարախոսություն, որի շնորհիվ մշակվել են Չինական կայսրության իշխող վերնախավերի ինքնաթարմացման գործիքները: Միավորող գաղափարախոսության և ինքնաթարմացման գործիքների առկայությունը հնարավորություն տվեց ստեղծել վերարտադրվող պետական համակարգ՝ հիմնված մերիտոկրատական կառավարման կոնֆուցիական սկզբունքների վրա:

Չինական ժամանակակից քաղաքական համակարգը նույնպես հիմնված է կոնֆուցիական պետական համակարգի դարավոր փորձի վրա:

- Կոնֆուցիականությունը սահմանում է չինացիների կողմից աշխարհի ավանդական ընկալումը, որպես հիերարխիկ համակարգ, որտեղ Չինաստանը կենտրոնական դիրք է զբաղեցնում: Դատելով չինացի առաջատար միջազգային հետազոտողների աշխատանքներից՝ աշխարհակարգի կոնֆուցիական մոդելը հայեցակարգային մակարդակում լուրջ ազդեցություն ունի Չինաստանի արտաքին քաղաքականության վրա:
- Ենթադրվում է, որ Չինաստանի արտաքին քաղաքականության վերաբերյալ կա ներկուսակցական փոխհամաձայնություն, ըստ որի՝ ոչ պաշտոնական խմբակցությունների միջև մրցակցությունը չպետք է ազդի ՉԺՀ արտաքին քաղաքականության վրա կամ դառնա Չինաստանի միջազգային դիրքերի թուլացման պատճառ:

Աշխատանքը գրված է պատշաճ գիտական լեզվով: Այն հնարավոր է դարձել հեղինակի կողմից սկզբնաղբյուրների համալիր ուսումնասիրության և գիտական շրջանառության մեջ դրված մի շարք նոր փաստագրական նյութերի շնորհիվ, որոնք համադրվելով այլ աղբյուրների հետ, ուշագրավ դիտարկումներ և սեփական եզրահանգումներ անելու լայն հնարավորություն են ընձեռնել:

Ակնհայտ է, որ պաշտպանության է ներկայացված քաղաքագիտության համար հետաքրքրություն ներկայացնող աշխատանք, որը, սակայն, զերծ չէ, որոշակի բացթողումներից, մասնավորապես՝

1. Հեղինակը նշում է, որ ժամանակակից Չինաստանի քաղաքականությունը «գաղափարականացված է», մինչդեռ չինական նախորդ ղեկավարության օրոք այն «ապագաղափարականացված» բնույթի էր: Նախևառաջ պետք է նշել, որ նման ձևակերպումը մատնանշում է հեղինակի հակվածությունը հիմնախնդիրը գնահատել նեոլիբերալ դիրքերից, ինչը, իր հերթին, գաղափարակացնում է հեղինակի նման պնդումը: Երևույթների օբյեկտիվ վերլուծությունը ցույց է տալիս, որ «կոմերիտականների» խմբի ներկայացուցիչ Հու Ձինթաոյի օրոք երկրի տնտեսական ոլորտում և, ընդհանրապես, հասարակական կյանքում ապահովվում էր լիբերալ սկզբունքների խորը ներթափանցումը, որի նպատակն էր դարձնել Չինաստանը գլոբալացվող աշխարհի բաղկացուցիչ տարրերից մեկը: Նման միտումը հանգեցնում էր Չինաստանի վերածմանը համաշխարհային տնտեսության մեջ սահմանափակ լիազորություններ ունեցող օբյեկտի, ինչը բացասական ազդեցություն կունենար երկրի ինքնիշխանության դրսևորման վրա: Իսկ ժամանակակից Չինաստանի արտաքին քաղաքականությունը չի կարող գաղափարականացված դիտարկվել, քանի որ այն միտված է պաշտպանելու ազգային շահերը, ապահովելու տնեսական

ինքնուրունությունը, զերծ պահելու հասարակությունը արտաքին գաղափարա-քաղաքական ազդեցությունից և, վերջին հաշվով, Չինաստանը դարձնել համաշխարհային սուբյեկտներից մեկը: Նույն տեսանկյունից պետք է նաև դիտարկել Հու Ձինթաոյի «Ներդաշնակ աշխարհի» և Սի Ծինփինի «Ընդհանուր ճակատագրերի հանրույթի» հայեցակարգերի միջև եղած տարբերությունները: Չինաստանի ժամանակակից հայեցակարգը միտված է բազմաբևեռ աշխարհակարգի ձևավորմանը, որտեղ գերակշռելու են փոխշահավետ համագործակցության, հավասարության և համերաշխության սկզբունքները:

2. Երկրորդ դիտողությունը սերտորեն կապված է առաջինի հետ: Հեղինակը պնդում է, որ ժամանակակից Չինաստանը նպատակ ունի կառուցել չինակենտրոն աշխարհակարգ: Պետք է նշել, որ չինական քաղաքականության մեջ նման միտում երբևիցե չի նկատվել: Հիմնական շեշտադրումը արվել է Չինաստանի առաջատար դերակատարման ամրապնդմանը տարածաշրջանային մակարդակի վրա, իսկ «չինակենտրոն աշխարհակարգ» եզրույթը հիմնականում վերաբերվել է տարածաշրջանային գործընթացներին: Այսօր ճիշտ չէ խոսել չինակենտրոն աշխարհակարգի ձևավորման մասին, քանի որ, ի տարբերություն այլ ուժային կենտրոնների, Չինաստանը ձգտում է չպարտադրել համաշխարհային զարգացման իր տեսլականը և ուշադրությունն առաջին հերթին սևեռում է այլ երկրների շահագրգիռ մասնակցությամբ համատեղ նախագծերին:
3. Հեղինակը ոչ հիմնավոր կերպով հավասարության նշան է դնում Հու Ձինթաոյի և Ցզյան Ցզեմինի քաղաքական մոտեցումների միջև, համարելով դրանք «ապագաղափարականացված և պրագմատիկ», այսինքն նեոլիբերալ: Առաջին հայացքից թվում է, որ դա համապատասխանում է ճշմարտությանը, քանի որ Ցզյան Ցզեմինի օրոք զգալիորեն խորացան լիբերալ բարեփոխումները տնտեսական ոլորտում, որոնք նոր թափ ստացան Հու Ձինթաոյի կառավարման տարիներին: Սակայն պետք է հաշվի առնել, որ Ցզյան Ցզեմինը, գիտակցելով գլոբալացվող աշխարհի վտանգները, կանխարգելիչ միջոցառումներ իրականացրեց Չինաստանի ինքնիշխանության ապահովման ուղղությամբ: Մասնավորապես, 2001 թվականին նրա հովանու ներքո հիմնվեց Շանհայան համագործակցության կազմակերպությունը (ՇՀԿ), Ցզյան Ցզեմինը պարբերաբար մտավախություն էր հայտնում օտար ուժերի կողմից երկիրը «արևմտականացնելու» և «պառակտելու» փորձերի վերաբերյալ, իսկ մինչ այդ, 1997 թվականին, Ցզյան Ցզեմինի Ռուսաստան կատարած այցի ժամանակ ընդունվեց համատեղ ռուս-չինական հռչակագիր բազմաբևեռ նոր աշխարհակարգի ձևավորման մասին: Այնպես որ Ցզյան Ցզեմինի քաղաքականությունը աչքի է ընկնում իր յուրահատկությամբ:
4. Աշխատանքում առակա են որոշ տեխնիկական բնույթի բաց թողումներ:

Այնուամենայնիվ, վերը նշված մասնակի թերություններն ամենևվին չեն նսեմացնում ատենախոսության գիտական արժեքը: Հաշվի առնելով այս հանգամանքը գտնում եմ, որ Հովհաննես Խաչատուրի Բարդակչյանի «Ընտրախավերի էվոլյուցիայի ազդեցությունը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության արտաքին քաղաքականության վրա (2003-2020)» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է գիտության թեկնածուի աստիճան հայցելու ատենախոսություններին առաջադրվող պահանջներին, իսկ հեղինակը արժանի է ԻԳ.00.04 – Միջազգային հարաբերություններ (քաղաքական գիտություններ, պատմական գիտություններ)» մասնագիտությամբ քաղաքական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
Երևանի պետական համալսարանի
Միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի Քաղաքագիտության
ամբիոնի ասիստենտ, քաղաքական
գիտությունների թեկնածու՝ Փ.Ա. Ենգոյան

Քաղաքական գիտությունների թեկնածու Փ.Ա. Ենգոյանի ստորագրությունը հաստատում եմ՝

Երևանի պետական համալսարանի
գիտական քարտուղար
բանասիրական գիտությունների թեկնածու,
ասիստենտ՝ Մ.Վ.Հովհաննիսյան

ք. Երևան
17.09.2023թ.